ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

N 12-191-16

«17» 03 2016թ.

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակի նախագահ
Ա.Սաքունցին

Ի պատասխան ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր՝ 2016 թվականի փետրվարի 9-ի Ե/2016-09.02/68 գրության հայտնում եմ, որ ՀՀ նախկին վարչապետ Արամ Զավենի Սարգսյանի կողմից Առաջին լրատվականին տրված հարցազրույցի ժամանակ իր կողմից արված հայտարարության վերաբերյալ 2016 թվականի մարտի 5-ին դարձյալ Առաջին լրատվականին տված հարցազրույցում լրագրողի հարցին, թե. «պարոն Սարգսյան, վերջերս մեր եթերում նշեցիք, որ Սերժ Սարգսյանը մի առիթով Ձեզ ասել է, որ գիտի, թե ովքեր են հոկտեմբերի 27-ի կազմակերպիչները և որ մի օր կասի, դրանից հետո իրավապաշտպան Արթուր Սաքունցը դիմեց գլխավոր դատախազություն՝ պահանջելով հարցաքննել Սերժ Սարգսյանին, Դուք ունե՞ք որևէ ինֆորմացիա էս գործընթացից և ինչ ակնկալիքներ ունեք:», Արամ Սարգսյանը պատասխանել է. «Գիտեք, ես չեմ ասել, որ Սերժ Սարգսյանը գիտի՝ ով է կազմակերպել: Ես ասել եմ, որ ինքն էլ էն կարծիքին չէ, որ հոկտեմբերի 27-ը չունի կազմակերպիչներ:», ապա շարունակելով հարցազրույցը՝ այդ կապակցությամբ Արամ Սարգսյանը պարզաբանում է, որ Սերժ Սարգսյանն այդ մասին հայտնել է իր տեսակետը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք: Մինչդեռ Արամ Սարգսյանի հայտարարությունից պարզ է դառնում, որ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը նրան հայտնել է իր կարծիքը և ոչ թե այն, որ այդ մասին իրեն տեղեկություններ են հայտնի, ուստի ՀՀ Նախագահին և Արամ Սարգսյանին հարցաքննելու մասին Ձեր պահանջն անհիմն է:

Հատկապես կարևոր գործերով քննության
վարչության դատախազ, արդարադատության
երրորդ դասի խորհրդական՝ *Վ.Դոլմազյան*